**2017-2021 Համաշխարհային արժեքների հետազոտության 7-րդ փուլ**

A. **Հետազոտության փուլի համարը. 7**

**C. Երկրի կոդը** (*Երկրի կոդի փոփոխականը երկրների ցանկից դնում է տվյալներն արխիվացնողը*)

| | | |
|---|---|---|
| | 5 | 1 |

**D. Հարցազրույցի համարը** (*Գրել քառանիշ թիվ յուրաքանչյուր հարցազրույցի համար*):

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

| *Նշումների բացակայության դեպքում ընդհանուր կոդավորումը հետևյալն է (չկարդալ, կոդավորել միայն այն դեպքում, երբ հարցվողը նշում է)* | |
|---|---|
| *-1 Չգիտեմ*<br>*-2 Չկա պատասխան/ Հրաժարվում է պատասխանել* | *-3 Կիրառելի չէ (ֆիլտր)*<br>*-5 Տվյալ չկա, կիրառելի չէ այլ պատճառներով* |

***[Ձ/վ. Ներկայացեք հարցվողին)***

Բարև Ձեզ, իմ անունը _____________ է: Ես ներկայացնում եմ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը (ՀՌԿԿ-Հայաստան): Մենք անցկացնում ենք միջազգային հետազոտություն այն մասին, թե ինչն են արժևորում մարդիկ կյանքում: Այս հետազոտությամբ ընտրանքային հարցումը ներկայացնելու է աշխարհի մարդկանց մեծամասնությունը: Ձեր անունը ընտրվել է պատահականորեն, որպես Հայաստանի բնակչության ընտրանքի մաս: Ես կցանկանայի լսել Ձեր տեսակետները տարբեր թեմաների շուրջ: Ձեր պատասխանների խիստ գաղտնիությունը պահպանվելու է, բայց դրանք կնպաստեն առավել լավ հասկանալու այն, թե մարդիկ աշխարհում ինչին են հավատում և ինչ են ուզում կյանքից:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ, ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

***(ՑՈՒՑԴ ՏՎԵՔ ՔԱՐՏ 1)***

**Նշվածներից յուրաքանչյուրի համար ասացեք, խնդրեմ, թե որքանո՞վ են դրանք կարևոր Ձեր կյանքում**

*(*Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան*):*

| | | Շատ կարևոր է | Ավելի շուտ կարևոր է | Այնքան էլ կարևոր չէ | Բնավ կարևոր չէ |
|---|---|---|---|---|---|
| Q1 | Ընտանիքը | 1 | 2 | 3 | 4 |
| Q2. | Ընկերները | 1 | 2 | 3 | 4 |
| Q3 | Ազատ ժամանակը | 1 | 2 | 3 | 4 |
| Q4 | Քաղաքականությունը | 1 | 2 | 3 | 4 |
| Q5 | Աշխատանքը | 1 | 2 | 3 | 4 |
| Q6 | Կրոնը | 1 | 2 | 3 | 4 |

***(ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 2)***
**Ահա որակների մի ցանկ, որոնք կարելի է խրախուսել, որ երեխաները սովորեն տանը: Նշվածներից որո՞նք եք Դուք համարում հատկապես կարևոր, եթե այդպիսիք կան:**
*[Զրուցավար, տարբերակներից յուրաքանչյուրի համար ՄԻ ՀԱՐՑՐԵՔ «Այո» կամ «Ոչ»: Ցույց տվեք քարտը և կոդավորեք ըստ տրված պատասխանի: Ընդունեք մինչև 5 պատասխան):*

| | | Նշվել է | Չի նշվել |
|---|---|---|---|
| Q7 | Լավ վարվելաձև | 1 | 2 |
| Q8 | Անկախություն | 1 | 2 |
| Q9 | Աշխատասիրություն | 1 | 2 |
| Q10 | Պատասխանատվության զգացում | 1 | 2 |
| Q11 | Երևակայություն | 1 | 2 |
| Q12 | Հանդուրժողականություն և հարգանք ուրիշների հանդեպ | 1 | 2 |
| Q13 | Խնայողություն, փողի և իրերի խնայողություն | 1 | 2 |
| Q14 | Վճռականություն, հաստատակամություն | 1 | 2 |
| Q15 | Կրոնական հավատք | 1 | 2 |
| Q16 | Անշահախնդրություն (ոչ եսասեր) | 1 | 2 |
| Q17 | Հնազանդություն | 1 | 2 |

***(ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 3)***
**Այս ցուցակում թվարկված են մարդկանց տարբեր խմբեր: Նշեք, խնդրեմ, այն խմբերը, որոնց ներկայացուցիչների հետ Դուք չէիք ցանկանա ապրել որպես հարևան:**
*(Յուրաքանչյուր խմբի համար նշեք համապատասխան կոդը):*

| | | Նշվել է | Չի նշվել |
|---|---|---|---|
| Q18 | Թմրամոլներ | 1 | 2 |
| Q19 | Այլ ռասայի մարդիկ | 1 | 2 |
| Q20 | ՁԻԱՀ-ով հիվանդներ | 1 | 2 |
| Q21 | Ներգաղթածներ, օտարերկրյա աշխատողներ | 1 | 2 |
| Q22 | Համասեռամոլներ | 1 | 2 |
| Q23 | Այլ հավատքի, կրոնի մարդիկ | 1 | 2 |
| Q24 | Հարբեցողներ | 1 | 2 |
| Q25 | Միասին ապրող չամուսնացած զույգեր | 1 | 2 |
| Q26 | Այլ լեզվով խոսող մարդիկ | 1 | 2 |

**Հետևյալ պնդումներից, որ հիմա կկարդամ, յուրաքանչյուրին ինչպե՞ս եք վերաբերում՝ լիովին համաձայն եք, համաձայն եք, համաձայն չեք, թե բնավ համաձայն չեք:** *(Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան):*

| | | Լիովին համաձայն եմ | Համաձայն եմ | Համաձայն չեմ | Բնավ համաձայն չեմ |
|---|---|---|---|---|---|
| Q27 | Իմ կյանքի հիմնական նպատակներից մեկը եղել է ծնողներիս հպարտացնելը | 1 | 2 | 3 | 4 |
| Q28 | Երբ մայրը վարձու աշխատող է, երեխաները տուժում են | 1 | 2 | 3 | 4 |
| Q29 | Ընդհանուր առմամբ, տղամարդիկ ավելի լավ քաղաքական առաջնորդներ են դառնում, քան կանայք | 1 | 2 | 3 | 4 |
| Q30 | Բարձրագույն կրթությունն ավելի կարևոր է տղաների, քան աղջիկների համար | 1 | 2 | 3 | 4 |
| Q31 | Ընդհանուր առմամբ, տղամարդիկ դառնում են ավելի լավ բիզնես ղեկավարներ, քան կանայք | 1 | 2 | 3 | 4 |
| Q32 | Տնային տնտեսուհի լինելը վճարովի աշխատանք անելուն համարժեք բան է | 1 | 2 | 3 | 4 |

**Հետևյալ պնդումների վերաբերյալ ի՞նչ կարծիքի եք. արդյո՞ք համաձայն եք, թե համաձայն չեք**
*(Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան):*

| | | Լիովին համաձայն եմ | Համաձայն եմ | Ոչ մեկը, ոչ մյուսը | Համաձայն չեմ | Բնավ համաձայն չեմ |
|---|---|---|---|---|---|---|
| Q33 | Երբ աշխատատեղերը քիչ են, տղամարդիկ ավելի շատ իրավունքներ պետք է ունենան աշխատելու, քան կանայք | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| .Q34 | Երբ աշխատատեղերը  քիչ են, գործատուները պետք է առավելություն տան տվյալ երկրի բնակիչներին, այլ ոչ թե ներգաղթածներին | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| .Q35 | Եթե կինը ամուսնուց  ավելի է վաստակում, ամենայն հավանականությամբ խնդիրներ կծագեն | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Q36 | Համասեռամոլ զույգերը նույնքան լավ ծնողներ են, որքան մյուս զույգերը | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Q37 | Երեխա ունենալը հասարակական պարտականություն է | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Q38 | Չափահաս զավակները պարտավոր են երկարաժամկետ խնամեն իրենց ծնողներին | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Q39 | Չաշխատող մարդիկ դառնում են ալարկոտ/ծույլ | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Q40 | Աշխատելը հասարակական պարտականություն է | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Q41 | Աշխատանքը միշտ պետք է առաջին տեղում լինի, անգամ եթե դա նշանակում է ավելի քիչ ազատ ժամանակ | 1 | 2 | 3 | 4 | 5 |

***(ՑՈՒՑՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 4)***
Q42 **Այս քարտում կա երեք կարևոր դիրքորոշում, որոնք հուզում են մեր հասարակությանը: Խնդրում եմ ընտրեք այն տարբերակը, որն առավել լավ է արտահայտում Ձեր սեփական կարծիքը**: *(Ընդունեք միայն մեկ պատասխան):*

1. Մեր հասարակության կազմակերպման ձևը/եղանակը պետք է արմատապես փոխել հեղափոխական գործողությունների միջոցով
2. Մեր հասարակությունը պետք է աստիճանաբար բարելավվի բարեփոխումների միջոցով
3. Մեր ներկայիս հասարակությունը պետք է հետևողականորեն պաշտպանել բոլոր հեղափոխական ուժերից (կամ՝ մեր հասարակությանը վերափոխումներ պետք չեն)

**Հիմա ես կթվարկեմ մեր կյանքի մի քանի՝ մոտակա ապագայում հնարավոր փոփոխություններ: Դրանցից յուրաքանչյուրի համար, ասացեք խնդրեմ, թե ինչ կարծիքի եք. դա լավ բան է, թե՞ վատ, կամ Ձեր համար միևնույնն է:**
*(Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան):*

| | | Լավ է | Միևնույնն է | Վատ է |
|---|---|---|---|---|
| Q43. | Աշխատանքը մեր կյանքում պակաս կարևոր կդառնա | 1 | 2 | 3 |
| Q44. | Տեխնոլոգիաների զարգացումն ավելի շատ կշեշտադրվի | 1 | 2 | 3 |
| Q45. | Իշխանությունների նկատմամբ հարգանքը կմեծանա | 1 | 2 | 3 |

## ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆ

**Q46. Ընդհանուր առմամբ, կարո՞ղ եք ասել, որ Դուք…** (*Կարդացեք պատասխանները, ընդունեք մեկ պատասխան)*

1. Շատ երջանիկ եք
2. Ավելի շուտ երջանիկ եք
3. Ավելի շուտ երջանիկ չեք
4. Բնավ երջանիկ չեք

**Q47. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կնկարագրեք Ձեր առողջական վիճակն այս օրերին: Այն ....** *(Կարդացեք, նշեք մեկ պատասխան):*

1. Շատ լավ է
2. Լավ է
3. Բավարար է
4. Վատ է
5. Շատ վատ է

**Q48** **Որոշ մարդիկ կարծում են, որ իրենք լիովին ազատ են իրենց ընտրության մեջ և կարող են վերահսկել իրենց կյանքը, մինչդեռ մյուսները հակառակ կարծիքի են: Ասացեք, խնդրեմ, թե որքանո՞վ եք Դուք ազատ ընտրություն կատարելու և Ձեր կյանքի ընթացքը վերահսկելու հարցում: Գնահատեք 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է, որ «չունեք ընտրության հնարավորություն», իսկ «10»-ը՝ «ունեք ընտրության լայն հնարավորություն»:** *(Ընդունեք մեկ պատասխան):*

**Չունեմ ընտրության հնարավորություն** — **Ունեմ ընտրության լայն հնարավորություն**

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

***(ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 5)***

**Q49. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք Դուք բավարարված Ձեր ներկայիս կյանքով: Օգտագործելով քարտը՝ գնահատեք, խնդրեմ, 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «բնավ բավարարված չեմ», «10»-ը՝ «լիովին բավարարված եմ»:** *(Ընդունեք մեկ պատասխան):*

Բնավ բավարարված չեմ — Լիովին բավարարված եմ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

***(ՑՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏ 6)***

**Q50. Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք Դուք բավարարված Ձեր ընտանիքի ֆինանսական վիճակով: Պատասխանի համար, օգտագործեք, խնդրեմ, նույն քարտը:** *(Ընդունեք մեկ պատասխան):*

Բնավ բավարարված չեմ — Լիովին բավարարված եմ

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

| **Վերջին 12 ամիսներին որքա՞ն հաճախ եք Դուք և Ձեր ընտանիքի անդամները….** | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Հաճախ | Երբեմն | Հազվադեպ | Երբբեք |
| Q51 | Մնացել առանց բավարար ուտելիքի/սննդի | 1 | 2 | 3 | 4 |
| Q52 | Անապահով զգացել Ձեր տանը՝ հանցագործությունից | 1 | 2 | 3 | 4 |
| Q53 | Մնացել առանց դեղորայքի կամ անհրաժեշտ բուժման | 1 | 2 | 3 | 4 |
| Q54 | Ապրել առանց կանխիկ եկամտի | 1 | 2 | 3 | 4 |
| Q55 | Մնացել առանց ապաստանի | 1 | 2 | 3 | 4 |

| Q56 | Համեմատելով Ձեր կյանքի կենսամակարդակը, Ձեր ծնողների կյանքի կենսամակարդակի հետ, երբ նրանք Ձեր տարիքում էին, կարող ե՞ք ասել, որ Ձեր կենսամակարդակը բարելավվել է, վատացել է, թե նույնն է մնացել: | Բարելավվել է | 1 |
|---|---|---|---|
| | | Վատացել է | 2 |
| | | Նույնն է մնացել | 3 |

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ,ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

| Q57 | **Ընդհանուր առմամբ, ի՞նչ եք կարծում, մարդկանց մեծամասնությանը կարելի՞ է վստահել, թե՞ մարկանց հետ հարաբերություններում պետք է զգուշավոր լինել:** *(Ընդունեք մեկ պատասխան)* | Կարելի է վստահել | 1 |
|---|---|---|---|
| | | Պետք է զգուշավոր լինել | 2 |
| | | | - |

| Q58-Q63. **Այժմ ես ուզում եմ Ձեզ հարցնել, թե որքանո՞վ եք վստահում մարդկանց տարբեր խմբերին: Կարո՞ղ եք ասել, թե արդյոք նշված խմբերից յուրաքանչյուրի անդամներին լիովին եք վստահում, մասամբ եք վստահում, այնքան էլ չեք վստահում, թե՞ բոլորովին չեք վստահում:** *(Կարդացեք տարբերակները, ընդունեք մեկ պատասխան ամեն տողում)* | | Լիովին վստահում եմ | Մասամբ վստահում եմ | Այնքան էլ չեմ վստահում | Բոլորովին չեմ վստահում |
|---|---|---|---|---|---|
| Q58 | Ձեր ընտանիքին | 1 | 2 | 3 | 4 |
| Q59 | Ձեր հարևաններին | 1 | 2 | 3 | 4 |
| Q60. | Մարդկանց, ում անձամբ ճանաչում եք | 1 | 2 | 3 | 4 |
| Q61 | Մարդկանց, ում հանդիպում եք առաջին անգամ | 1 | 2 | 3 | 4 |
| Q62. | Այլ կրոնի մարդկանց | 1 | 2 | 3 | 4 |
| Q63 | Այլ ազգության մարդկանց | 1 | 2 | 3 | 4 |
| Q63Arm | Այլ քաղաքական հայացքների տեր մարրդկանց | 1 | 2 | 3 | 4 |

| Q64-Q82. **Այժմ ես կթվեմ մի շարք կազմակերպություններ: Ասացեք խնդրեմ, թե նշվածներից յուրաքանչյուրին որքանո՞վ եք վստահում՝ շատ եք վստահում, բավականին վստահում եք, այնքան էլ չեք վստահում, թ՞ե բոլորովին չեք վստահում:** *(Զ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան):* | | Շատ եմ վստահում | Բավականին վստահում եմ | Այնքան էլ չեմ վստահում | Բոլորովին չեմ վստահում |
|---|---|---|---|---|---|
| Q64 | Եկեղեցի | 1 | 2 | 3 | 4 |
| Q65 | Զինված ուժեր | 1 | 2 | 3 | 4 |
| Q66 | Մամուլ | 1 | 2 | 3 | 4 |
| Q67 | Հեռուստատեսություն | 1 | 2 | 3 | 4 |
| Q68 | Արհմիություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q69 | Ոստիկանություն | 1 | 2 | 3 | 4 |
| Q70 | Դատարաններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q71 | Հայաստանի կառավարություն | 1 | 2 | 3 | 4 |
| Q72 | Քաղաքական կուսակցություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q73 | Հայաստանի Ազգային Ժողով | 1 | 2 | 3 | 4 |
| Q74 | Հանրային/քաղաքացիական ծառայություններ (պետական հիմնարկներ) | 1 | 2 | 3 | 4 |
| Q75 | Համալսարաններ/Բուհեր | 1 | 2 | 3 | 4 |
| Q76 | Ընտրություններ/ ընտրական մարմիններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q77 | Խոշոր ձեռնարկություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q78 | Բանկեր | 1 | 2 | 3 | 4 |
| Q79 | Շրջակա միջավայրով զբաղվող կազմակեպություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q80 | Կանանց հարցերով զբաղվող կազմակեպություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q81 | Բարեգործական, մարդասիրական կազմակերպություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q81 | Եվրամիություն | 1 | 2 | 3 | 4 |
| Q82 | Եվրոպական միություն | 1 | 2 | 3 | 4 |
| Q 83. | Միավորված ազգերի կազմակերպություն | 1 | 2 | 3 | 4 |

| **Ավելի շատ խոսելով միջազգային կազմակերպությունների մասին՝ Դուք որքանո՞վ եք վստահում դրանցից յուրաքանչյուրին՝ շատ եք վստահում, բավականին վստահում եք, այնքան էլ չեք վստահում, թե՞ բոլորովին չեք վստահում** *(Զ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան)* | | Շատ եմ վստահում | Բավականին վստահում եմ | Այնքան էլ չեմ վստահում | Բնավ չեմ վստահում |
|---|---|---|---|---|---|
| Q84 | Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) | 1 | 2 | 3 | 4 |
| Q85 | Միջազգային քրեական դատարան (ՄՔԴ) | 1 | 2 | 3 | 4 |
| Q86 | Հյուսիսատլանտյան դաշինք (ՆԱՏՕ) | 1 | 2 | 3 | 4 |
| Q87 | Համաշխարհային բանկ | 1 | 2 | 3 | 4 |
| Q88 | Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) | 1 | 2 | 3 | 4 |
| Q89 | Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) | 1 | 2 | 3 | 4 |

**Q90. Ներկայումս շատ են խոսում միջազգային կազմակերպությունների մասին: Մարդիկ երբեմն ասում են, որ դրանք պետք է առաջնային դարձնեն մարդկանց կյանքի բարելավումը, նույնիսկ եթե դա ենթադրում է ոչ ժողովրդավարական որոշումների իրականացում: Ըստ Ձեզ, միջազգային կազմակերպությունների համար ի՞նչը պետք է առաջնային լինի, արդյունավետությունը, թե՞ ժողովրդավարությունը: Եթե Ձեր տեսակետը միջանկյալ է, կարող եք ընտրել 1-ից 10 ընկած հատվածից համապատասխան թիվը:** *(ցույց տվեք ՔԱՐՏ 7-ը )*

Լինել արդյունավետ — Լինել ժողովրդավարական

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

**Այստեղ նշված են որոշ հարցեր կապված միջազգային կազմակերպությունների հետ: Շատերը չգիտեն դրանց պատասխանները, բայց եթե Դուք գիտեք, խնդրում եմ նշեք:** *Ընդունեք մեկ պատասխան յուրաքանչյուր տողի համար (ՔԱՐՏ 8)*

| | | Ա | Բ | Գ |
|---|---|---|---|---|
| Q91 | ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում մշտական տեղեր ունեն հինգ երկրներ: Հետևյալ երկրներից ո՞րը խորհրդի մշտական անդամ չէ. Ա) Ֆրանսիա Բ) Չինաստան Գ) Հնդկաստան | 1 | 2 | 3 |
| Q92 | Որտե՞ղ է գտնվում Արժույթի միջազգային հիմնադրամի գլխադասային գրասենյակը, Ա) Վաշինգտոն Բ) Լոնդոն Գ) Ժնև | 1 | 2 | 3 |
| Q93 | Հետևյալ խնդիրներից որոնցո՞վ է զբաղվում Ամնեսթի ինթերնեշնլ կազմակերպությունը: Ա) Կլիմայի փոփոխություն Բ) Մարդու իրավունքներ Գ) Պատմական հուշարձանների ոչնչացում | 1 | 2 | 3 |

| **Հիմա ես կկարդամ հասարակական/ կամավորական կազմակերպություններ ի մի ցանկ: Դրանցից յուրաքանչյուրի համար ասացեք, խնդրեմ, արդյո՞ք հանդիսանում եք դրա ակտիվ անդամ, պասիվ անդամ, թե՞ ընդհանրապես չեք անդամակցում:** *(Զ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուր կազմակերպության համար նշեք մեկ պատասխան)* | | | Ակտիվ | Պասիվ | Անդամ չէ |
|---|---|---|---|---|---|
| | Q94 | Եկեղեցական կամ կրոնական | 2 | 1 | 0 |
| | Q95 | Սպորտային կամ ժամանցային | 2 | 1 | 0 |
| | Q96 | Արվեստի, երաժշտության կամ կրթության հետ կապված | 2 | 1 | 0 |
| | Q97 | Արհմիություն | 2 | 1 | 0 |
| | Q98 | Քաղաքական կուսակցություն | 2 | 1 | 0 |
| | Q99 | Շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված | 2 | 1 | 0 |
| | Q100 | Մասնագիտական միավորումներ | 2 | 1 | 0 |
| | Q101 | Մարդասիրական, բարեգործական | 2 | 1 | 0 |
| | Q102 | Սպառողների շահերի պաշտպանության | 2 | 1 | 0 |
| | Q103 | Ինքնօգնության կամ փոխադարձ օգնության խմբեր | 2 | 1 | 0 |
| | Q104 | Կանանց խմբեր | 2 | 1 | 0 |
| | Q105 | Այլ կազմակերպություն | 2 | 1 | 0 |

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

**(*ՔԱՐՏ 9*) Այժմ ներկայացրեք, խնդրեմ, Ձեր տեսակետները տարբեր հարցերի առնչությամբ: Ինչպե՞ս կդասակարգեիք Ձեր տեսակետները՝ օգտվելով 10 բալանոց սանդղակից, որտեղ «1»-ը նշանակում է, որ Դուք լիովին համաձայն եք ձախում նշված պնդմանը, «10»-ը՝ աջում նշվածին, իսկ եթե Ձեր տեսակետը այդ երկու դատողությունների համակցություն է, կարող եք ընտրել 1-ից 10 միջակայքի համապատասխան թիվը:** *(Զ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուր խնդրի համար նշեք մեկ պատասխան):*

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Q106 | Եկամուտների տարբերությունը չպետք շատ մեծ լինի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | Եկամուտները պետք է ավելի շատ խրախուսեն անհատական ջանքերը |
| Q107 | Բիզնեսում և արդյունաբերության մեջ մասնավոր սեփականությունը պետք է ավելացվի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | Բիզնեսում և արդյունաբերության մեջ կառավարության/պետության սեփականությունը պետք է ավելացվի |
| Q108 | Պետությունը պետք է ավելի մեծ պատասխանատվություն կրի մարդկանց մասին հոգալու համար | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | Մարդիկ իրենք պետք է ավելի մեծ պատասխանատվություն կրեն իրենց մասին հոգալու համար |
| Q109 | Մրցակցությունը լավ բան է: | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | Մրցակցությունը վնասակար է: |
| Q110 | Համառ աշխատանքը, որպես կանոն, ապահովում է ավելի լավ կյանք | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | Համառ աշխատանքը, որպես կանոն, հաջողություն չի բերում: Դա ավելի շատ բախտի և կապերի արդյունք է: |

| | | | |
|---|---|---|---|
| Q111. | **Մարդիկ, խոսելով շրջակա միջավայրի և տնտեսական աճի մասին, հաճախ անում են հետևյալ պնդումները: Դրանցից ո՞րն է առավել մոտ Ձեր սեփական կարծիքին:** *(Զ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուրի համար նշեք մեկ պատասխան):* | Շրջակա միջավայրի պաշտպանությանը պետք է առաջնային լինի, նույնիսկ եթե այն հանգեցնում է տնտեսական աճի դանդաղեցման և աշխատատեղերի կորստի | 1 |
| | | Տնտեսական աճը և աշխատատեղերի ստեղծումը պետք է առաջնային լինեն, նույնիսկ եթե շրջակա միջավայրը որոշ չափով կտուժի դրանից | 2 |
| | | Այլ (նշել) | 3 |

## ԿՈՌՈՒՊՑԻԱ

**(*ՔԱՐՏ 10*)** Q112. **Այժմ, կիսեք, խնդրեմ, Ձեր տեսակետները կոռուպցիայի վերաբերյալ, երբ մարդիկ կաշառք, նվեր են տալիս կամ լավություն անում այլ մարդկանց, որպեսզի ստանան իրենց անհաժեշտ ծառայությունները: 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «Հայաստանում կոռուպցիա չկա», «10»-ը՝ «Հայաստանում կոռուպցիան շատ տարածված է», Դուք ինչպե՞ս կգնահատեք Ձեր դիրքորոշումները կոռուպցիայի մասին: Եթե Ձեր տեսակետը այդ դատողությունների միջակայքում է, կարող եք ընտրել 1-ից 10 հատվածի համապատասխան թիվը:**

Հայաստանում կոռուպցիա չկա — Հայաստանում կոռուպցիան շատ տարածված է

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

**Ըստ Ձեզ, նշված խմբերը որքանո՞վ են ներքաշված կոռուպցիայի մեջ: Խնդրում եմ, պատասխանել յուրաքանչյուր խմբի համար, արդյո՞ք նրանցից ոչ մեկը, քչերը, մեծ մասը, թե՞ բոլորն են ներգրավված կոռուպցիայի մեջ:**

| | | Ոչ մեկը | Քչերը | Մեծ մասը | Բոլորը |
|---|---|---|---|---|---|
| Q113 | Պետական իշխանությունները/մարմինները | 1 | 2 | 3 | 4 |
| Q114 | Բիզնեսների ղեկավարները | 1 | 2 | 3 | 4 |
| Q115 | Տեղական իշխանությունները/մարմինները | 1 | 2 | 3 | 4 |
| Q116 | Քաղաքացիական ծառայություն մատուցողները (ոստիկանություն, դատական համակարգ, քաղաքացիական ծառայողներ, բժիշկներ, ուսուցիչներ) | 1 | 2 | 3 | 4 |
| Q117 | Լրագրողները և մեդիան | 1 | 2 | 3 | 4 |

Q118. Այժմ, ես ուզում եմ իմանալ տեղական պաշտոնյաների և ծառայություն մատուցողների, ինչպես նաև Ձեր համայնքի ոստիկանների, իրավաբանների, բժիշկների, ուսուցիչների ու քաղաքացիական ծառայողների հետ ունեցած Ձեր փորձի մասին: Ըստ Ձեզ, Ձեր նման կամ Ձեր շրջապատի մարդիկ որքա՞ն հաճախ են կաշառք, նվեր տալիս կամ լավություն անում ցանկալի ծառայություն ստանալու համար: Արդյո՞ք դա երբեք, հազվադեպ, հաճախակի, թե՞ միշտ է տեղի ունենում: *(Զ/վ Ընդունեք մեկ պատասխան):*

| Երբեք | Հազվադեպ | Հաճախ | Միշտ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |

Q119. Կարո՞ղ եք ասել, թե որքանով եք համաձայն այն դատողության հետ, որ «կանայք ընդհանուր առմամբ պակաս կոռումպացված են, քան տղամարդիկ»:

| Լիովին համաձայն եմ | Համաձայն եմ | Համաձայն չեմ | Բնավ համաձայն չեմ | ԴՊ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 0 |

Q120 *(ՔԱՐՏ 11)* Որքա՞ն մեծ է մեր երկրում հանրային ծառայություն ստանալու նպատակով լավություն անելու, կաշառք կամ նվեր տալու և վերցնելու համար պատասխանատվության ենթարկվելու ռիսկը: Գնահատեք 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «ընդհանրապես ռիսկ չկա», իսկ «10»-ը՝ «ռիսկը շատ բարձր է»:

| Ընդհանարապես ռիսկ չկա | | | | | | | Շատ բարձր ռիսկ կա | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

## ՄԻԳՐԱՑԻԱ

Q121. Այժմ կցանկանայի իմանալ Ձեր կարծիքը այլ երկրներից Հայաստանում ապրելու նպատակով եկած մարդկանց՝ ներգաղթյալների մասին: Ինչպե՞ս կգնահատեք այդ մարդկանց ազդեցությունը Հայաստանի զարգացման վրա:

| Շատ լավ | Բավականին լավ | Ոչ լավ, ոչ վատ | Բավականին վատ | Շատ վատ |
|---|---|---|---|---|
| 5 | 4 | 3 | 2 | 1 |

*(ՔԱՐՏ 12)* Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է եղել ներգաղթի ազդեցությունը Հայաստանի զարգացման վրա: Ասացեք, խնդրեմ, համաձայն եք թե՞ անհամաձայն ներգաղթի ազդեցության վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ: *(Զ/վ Յուրաքանչյուր տարբերակի համար նշեք «համաձայն եմ» կամ «համաձայն չեմ» պատասխանները, մի կարդացեք և նշեք «դժվարանում եմ պատասխանել» տարբերակը միայն ռեսպոնդենտի նշելու դեպքում):*

| | | Համաձայն եմ | *ԴՊ* | Համաձայն չեմ |
|---|---|---|---|---|
| Q122 | Լրացնում է կարևոր ազատ աշխատատեղեր | 2 | *1* | 0 |
| Q123 | Ամրապնդում է մշակութային բազմազանությունը | 2 | *1* | 0 |
| Q124 | Բարձրացնում է հանցագործությունների մակարդակը | 2 | *1* | 0 |
| Q125 | Ապաստան է տալիս քաղաքական փախստականներին, որոնք հալածվում են այլ վայրերում | 2 | *1* | 0 |
| Q125aArm | Ապաստան է տալիս պատերազմական գոտիներից եկած փախստականներին: | 2 | *1* | 0 |
| Q125bArm | Կրթության հնարավորություն է տալիս հայրենակիցներին» | 2 | *1* | 0 |
| Q126 | Մեծացնում է ահաբեկչության ռիսկերը | 2 | *1* | 0 |
| Q127 | Աղքատ երկրների մարդկանց առաջարկում է ավելի լավ կյանք | 2 | *1* | 0 |
| Q128 | Ավելացնում է գործազրկությունը | 2 | *1* | 0 |
| Q129 | Տանում է սոցիալական բախումների | 2 | *1* | 0 |

**Q130. Ինչ կասե՞ք աշխատելու նպատակով այլ երկրներից եկող մարդկանց մասին. ըստ Ձեզ, նշվածներից ո՞րը պետք է անի կառավարությունը:**

1. Բոլոր ցանկացողներին պետք է թույլ տա գալ
2. Պետք է մարդկանց թույլ տա գալ, եթե ազատ աշխատատեղեր կան
3. Պետք է խստորեն սահմանափակի եկող օտարերկրացիների թիվը
4. Պետք է արգելի օտարերկրացիների մուտքը Հայաստան

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

**Q131. Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք Ձեզ ապահով զգում Ձեր շրջակայքում ներկայումս:**

| | |
|---|---|
| Շատ ապահով | 1 |
| Հիմնականում ապահով | 2 |
| Հիմնականում անապահով | 3 |
| Շատ անապահով | 4 |

**Որքա՞ն հաճախ են ներքոնշյալ դեպքերը պատահում Ձեր շրջակայքում:**

| | | Շատ հաճախ | Հաճախ | Ոչ այնքան հաճախ | Հազվա դեպ |
|---|---|---|---|---|---|
| Q132. | Գողություններ | 1 | 2 | 3 | 4 |
| Q133. | Ալկոհոլի օգտագործում փողոցներում | 1 | 2 | 3 | 4 |
| Q134. | Ոստիկանության կամ զինված ուժերի միջամտություն մարդկանց անձնական կյանքին | 1 | 2 | 3 | 4 |
| Q135. | Ռասիստական վարքագիծ | 1 | 2 | 3 | 4 |
| Q136. | Փողոցում թմրանյութերի վաճառք | 1 | 2 | 3 | 4 |
| Q137. | Փողոցային հանցագործություններ և կռիվներ | 1 | 2 | 3 | 4 |
| Q138. | Սեռական ոտնձգություններ | 1 | 2 | 3 | 4 |

**Ձեր անվտանգության համար հետևյալներից ո՞րն եք ձեռնարկում:** *(Բազմակի պատասխաններ)*

| | | Այո | Ոչ |
|---|---|---|---|
| Q139. | Մոտս շատ դրամ չեմ պահում | 1 | 2 |
| Q140. | Գերադասում եմ գիշերները դուրս չգալ | 1 | 2 |
| Q141. | Ինձ հետ կրում եմ դանակ, ատրճանակ կամ այլ զենք | 1 | 2 |

**Որքանո՞վ է Ձեզ մտահոգում այս հնարավոր իրավիճակներից յուրաքանչյուրը:**

| | Շատ | Բավականին | Ոչ այնքան | Չի մտահոգում |
|---|---|---|---|---|
| Q142. Աշխատանք կորցնել կամ նոր աշխատանք չգտնել | 1 | 2 | 3 | 4 |
| Q143. Չկարողանալ երեխաներին ապահովել լավ կրթությամբ | 1 | 2 | 3 | 4 |

**Վերջին տարվա ընթացքում Դուք եղե՞լ եք կամ Ձեր անմիջական ընտանիքի անդամներից որևէ մեկը դարձե՞լ է արդյոք հանցագործության զոհ:**

| | Այո | Ոչ |
|---|---|---|
| Q144. Հարցվող | 1 | 2 |
| Q145. Ընտանիք | 1 | 2 |

**Որքանո՞վ է Ձեզ մտահոգում այս հնարավոր իրավիճակներից յուրաքանչյուրը:**

| | Չափազանց շատ | Շատ | Ոչ այնքան շատ | Բնավ չի մտահոգում |
|---|---|---|---|---|
| Q146. Պատերազմ՝ մեր երկրի մասնակցությամբ | 1 | 2 | 3 | 4 |
| Q147. Ահաբեկչական հարձակում | 1 | 2 | 3 | 4 |
| Q148. Քաղաքացիական պատերազմ | 1 | 2 | 3 | 4 |

Q149. **Մարդկանց մեծամասնությունը համարում է, որ անկախությունը և հավասարությունը կարևոր են, բայց եթե Դուք ընտրելու լինեք դրանց միջև, ո՞րն առավել շատ կկարևորեք:**

1. Անկախություն
2. Հավասարություն

Q150. **Մարդկանց մեծամասնությունը համարում է, որ ազատությունը և անվտանգությունը կարևոր են, բայց եթե Դուք ընտրելու լինեք դրանց միջև, ո՞րն առավել շատ կկարևորեք:**

1. Ազատություն
2. Անվտանգություն

Q151. **Մենք բոլորս, անշուշտ, հուսով ենք, որ մեկ այլ պատերազմ չի լինելու, բայց եթե հանկարծ այն սկսվի, Դուք պատրա՞ստ եք արդյոք կռվել Ձեր հայրենիքի համար:** *(Չ/վ Ընդունեք մեկ պատասխան):*

1 Այն    2 Ոչ

Q151aArm **Որքանո՞վ եք համաձայն պատերազմի և խաղաղության վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ: Գնահատման համար օգտագործեք 10 բալանոց սանդղակ, որտեղ «1»-ը նշանակում է, որ Դուք բոլորովին համաձայն չեք, իսկ «10»-ը՝ լիովին համաձայն եք, իսկ եթե Ձեր տեսակետը այդ երկուսի միջակայքում է, նշեք 1-ից 10 միջակայքի համապատասխան թիվը:** *(Չ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուր տողի համար նշեք մեկ պատասխան):*

| | Բոլորովին համաձայն չեմ | | | | | | | | | Լիովին համաձայն եմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սպառազինությունը վատթարացնում վիճակը | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 2 | Սպառազինությունը երաշխավորում է խաղաղություն | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 3 | Պատերազմներն անհրաժեշտ են արդարության համար | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 4 | Պատերազմները չեն կարող խաղաղություն հաստատել, դրանք մղում են նոր պատերազմի | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 5 | «Ազգ-բանակ» հայեցակարգի իրականացումը Հայաստանում անհրաժեշտ է | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

Q151bArm **Որքանո՞վ եք համաձայն միջազգային համագործակցության վերաբերյալ հետևյալ դատողությունների հետ: Գնահատման համար օգտագործեք 10 բալանոց սանդղակ, որտեղ «1»-ը նշանակում է, որ Դուք բոլորովին համաձայն չեք, իսկ «10»-ը՝ լիովին համաձայն եք, իսկ եթե Ձեր տեսակետը այդ երկուսի միջակայքում է, նշեք 1-ից 10 միջակայքի համապատասխան թիվը:** *(Չ/վ Կարդացեք տարբերակները, յուրաքանչյուր տողի համար նշեք մեկ պատասխան):*

| | Բոլորովին համաձայն չեմ | | | | | | | | | Լիովին համաձայն եմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Դաշնակիցների հետ համագործակցությունն անհրաժեշտ է, անկախ նրանից, թե որն է դրա գինը | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 2 | Միացյալ ազգերի կազմակերպությանն անդամակցելը հարցեր չի լուծում և արդյունավետ չէ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 3 | Հայաստանի և Թուրքիայի ուղղակի երկխոսությունը կարևոր է | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 4 | Մենք պետք է ապավինենք բացառապես մեզ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

ՀԵՏՄՆԱՅՆԱԿԱՆ (ՊՈՍՏՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ) ՀԱՄԱԹԻՎ

| Q152. *(ՔԱՐՏ 13)* **Մարդիկ երբեմն խոսում են, թե ինչպիսի նպատակներ պետք է դրվեն Հայաստանի առջև մոտակա 10 տարիներին: Այս քարտում թվարկված են մի քանի նպատակներ, որոնք տարբեր մարդիկ առաջնային են համարում: Ասացեք, խնդրեմ, այդ նպատակներից ո՞րն եք Դուք համարում ամենակարևորը:** *(Չ/վ ընդունեք միայն մեկ պատասխան առաջին ընտրության ներքո)*<br><br>**Q153. Իսկ ո՞րն է 2-րդ առավել կարևորը:** *(Չ/վ ընդունեք միայն մեկ պատասխան երկրորդ ընտրության ներքո)* | **152. 1-ինը** | **153. 2-րդը** |
|---|---|---|
| Տնտեսական աճի բարձր մակարդակը | 1 | 1 |
| Երկրի հուսալի պաշտպանունակության ապահովումը | 2 | 2 |
| Տեսնելը, որ մարդիկ ավելի շատ ասելիք/դերակատարում ունեն իրենց աշխատավայրում և համայնքում տեղի ունեցողի վերաբերյալ | 3 | 3 |
| Մեր քաղաքներն ու գյուղերն ավելի բարեկարգ դարձնելը | 4 | 4 |

| Q154. *(ՔԱՐՏ 14)* **Եթե ընտրելու լինեիք, այս քարտում նշվածներից ո՞րը կընտրեիք որպես ամենակարևորը: Q155 Իսկ ո՞րը կընտրեիք որպես 2-րդ առավել կարևորը:** | **154. 1-ինը** | **155. 2-րդը** |
|---|---|---|
| Երկրում կարգ ու կանոնի ապահովումը | 1 | 1 |
| Կառավարության կարևոր որոշումների վրա մարդկանց ազդելու ավելի շատ հնարավորություն տալը | 2 | 2 |
| Պայքարը գնաճի դեմ | 3 | 3 |
| Խոսքի ազատության պաշտպանությունը | 4 | 4 |

| Q 156. *(ՔԱՐՏ 15)* **Ահա մեկ այլ ցուցակ: Ձեր կարծիքով, թվարկվածներից ո՞րն է ամենակարևորը:**<br><br>**Q157. Իսկ ո՞րն է 2-րդ առավել կարևորը:** | **156. 1-ինը** | **157. 2-րդը** |
|---|---|---|
| Կայուն տնտեսությունը | 1 | 1 |
| Առաջընթացը դեպի ավելի քիչ անդեմ և ավելի մարդկային հասարակություն | 2 | 2 |
| Առաջընթացը դեպի հասարակություն, որտեղ գաղափարներն ավելի են գնահատվում, | 3 | 3 |

| | | |
|---|---|---|
| քան փողը | | |
| Պայքարը հանցավորության դեմ | 4 | 4 |

## ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

*(ՔԱՐՏ 16)* **Այժմ կթվարկեմ որոշ դատողություններ: Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք համաձայն կամ անհամաձայն դրանցից յուրաքանչյուրի հետ: Գնահատեք 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է «բոլորովին համաձայն չեմ», իսկ «10»-ը՝ «լիովին համաձայն եմ»:***(Զ/վ Ընդունեք մեկ պատասխան յուրաքանչյուր դատողության համար):*

**Q158. Գիտությունը և տեխնոլոգիան մեր կյանքը դարձնում են ավելի առողջ, հեշտ և հարմարավետ:**

Բոլորովին համաձայն չեմ / Լիովին համաձայն եմ

1 2 3 4 5 6 7 8 9 10

**Q159. Գիտության և տեխնոլոգիայի շնորհիվ հաջորդ սերունդն ավելի մեծ հնարավորություններ կունենա:**

Բոլորովին համաձայն չեմ / Լիովին համաձայն եմ

1 2 3 4 5 6 7 8 9 10

**Q160. Մենք չափազանց շատ ենք կախված գիտությունից, իսկ հավատքից՝ շատ քիչ:**

Բոլորովին համաձայն չեմ / Լիովին համաձայն եմ

1 2 3 4 5 6 7 8 9 10

**Q161. Գիտության վատ հետևանքներից մեկն այն է, որ այն մարդկանց գաղափարները բաժանում է ճշտի և սխալի:**

Բոլորովին համաձայն չեմ / Լիովին համաձայն եմ

1 2 3 4 5 6 7 8 9 10

**Q162. Իմ առօրյա կյանքում ինձ համար կարևոր չէ գիտությամբ հետաքրքրվելը:**

Բոլորովին համաձայն չեմ / Լիովին համաձայն եմ

1 2 3 4 5 6 7 8 9 10

**Q163. Հաշվի առնելով բոլոր հանգամանքները, Ձեր կարծիքով, գիտության և տեխնոլոգիայի շնորհիվ աշխարհին ավելի շատ շահու՞մ է, թե՞ տուժում: Գնահատեք, խնդրեմ, 10 բալանոց սանդղակով, որտեղ «1»-ը նշանակում է, որ «մեծապես տուժում է», իսկ «10»-ը՝ «մեծապես շահում է»:** *(Զ/վ Ընդունեք մեկ պատասխան յուրաքանչյուր դատողության համար):*

Մեծապես տուժում է / Մեծապես շահում է

1 2 3 4 5 6 7 8 9 10

## ԿՐՈՆԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

**Q 164.** *(ՔԱՐՏ 17)* **Որքանո՞վ է կարևոր Աստվածը Ձեր կյանքում: Գնահատեք 1-10 սանդղակով, որտեղ «10»-ը նշանակում է «շատ կարևոր է», իսկ «1»-ը նշանակում է «բնավ կարևոր չէ»:** *(Ընդունեք մեկ պատասխան)*

Բնավ կարևոր չէ / Շատ կարևոր է

1 2 3 4 5 6 7 8 9 10

**Նշվածներին որի՞ն եք հավատում, եթե հավատում եք:**

| | | Այո | Ոչ |
|---|---|---|---|
| Q165 | Աստծուն | 1 | 2 |
| Q166 | Մահից հետո կյանքին | 1 | 2 |
| Q167 | Դժոխքին | 1 | 2 |
| Q168 | Դրախտին | 1 | 2 |

**Խնդրում եմ նշել, արդյո՞ք լիովին եք համաձայն, համաձայն եք, համաձայն չեք, թե լիովին համաձայն չեք նշված դատողությունների հետ:**

| | | Լիովին համաձայն եմ | Համաձայն եմ | Համաձայն չեմ | Բնավ համաձայն չեմ |
|---|---|---|---|---|---|
| Q169 | Երբ կրոնն ու գիտությունը բախվում են, կրոնը միշտ ճիշտ է | 1 | 2 | 3 | 4 |
| Q170 | Միակ ընդունելի կրոնը իմ կրոնն է | 1 | 2 | 3 | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| Q171. | *(ՔԱՐՏ 18)* **Բացի հարսանիքներից և թաղումներից, որքա՞ն հաճախ եք Դուք ներկայումս մասնակցում կրոնական արարողություններին:** *(Ընդունեք մեկ պատասխան)* | Շաբաթը մեկ անգամից ավել | 1 |
| | | Շաբաթը մեկ անգամ | 2 |
| | | Ամիսը մեկ անգամ | 3 |
| | | Միայն հատուկ կրոնական տոներին | 4 |
| | | Տարին մեկ անգամ | 5 |
| | | Ավելի հազվադեպ | 6 |
| | | Գրեթե երբեք/երբեք | 7 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Q172. | *(ՔԱՐՏ 19)* **Բացի հատուկ իրադարձություններից՝ հարսանիքներ, թաղումներ և այլն, որքա՞ն հաճախ եք աղոթում:** *(Ընդունեք մեկ պատասխան)* | Օրը մի քանի անգամ | 1 | Տարին մեկ անգամ | 6 |
| | | Օրը մեկ անգամ | 2 | Ավելի հազվադեպ | 7 |
| | | Շաբաթը մի քանի անգամ | 3 | Գրեթե երբեք/երբեք | 8 |
| | | Միայն կրոնական արարողություն-ներին մասնակցելիս | 4 | | |
| | | Միայն հատուկ կրոնական տոներին | 5 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Q173. | **Անկախ նրանից՝ հաճախում եք եկեղեցի, թե ոչ, կարո՞ղ եք ասել, որ Դուք**...*(կարդացեք տարբերակները ընդունեք մեկ պատասխան)* | Հավատացյալ եք | 1 | Աթեիստ եք | 3 |
| | | Հավատացյալ չեք | 2 | | |

| | | | |
|---|---|---|---|
| Q174. | **Այս դատողություններից ո՞րի հետ եք առավել համաձայն: Կրոնի հիմնական էությունն է...** *(Ընդունեք մեկ պատասխան)* | Հետևել կրոնական նորմերին և արարողություններին | 1 |
| | | Լավություն անել այլ մարդկանց | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| Q175. | **Իսկ այս դատողություններից ո՞րի հետ եք առավել համաձայն: Կրոնի հիմնական իմաստն է...** *(Ընդունեք մեկ պատասխան)* | Իմաստավորել հանդերձյալ կյանքը | 1 |
| | | Իմաստավորել կյանքն այս աշխարհում | 2 |

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ

**Q176. Որքանո՞վ եք համաձայն կամ անհամաձայն այն դատողության հետ, որ մեր օրերում մարդիկ հաճախ դժվարանում են որոշել, թե որ բարոյական նորմերն են ճշմարիտ և հետևել դրանց:**

| Լիովին համաձայն եմ | | | | | | | | | Բնավ համաձայն չեմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |

